ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՉՈՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (10.09.2018 - 07.12.2018) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման չորրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 4 հերթական և 7 արտահերթ նիստ՝ 4-ը ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 3-ը ԱԺ պատգամավորների: Բացի սրանից գումարվել է նաև 1 հատուկ նիստ, իսկ հերթական նստաշրջանից առաջ էլ գումարվել է 2 արտահերթ նստաշրջան: Հերթական նիստերից 1-ը, դեկտեմբերի 4-ին գումարվողը, չկայացավ քվորումի բացակայության պատճառով:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էր 37 հարց, որից 20-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին (1-ը անհետաձգելի), 11-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների, իսկ 6-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցեր էին:

Հետագայում, հերթական նիստերի ընթացքում, նստաշրջանի օրակարգը լրացվեց ևս 16 հարցով, իսկ արտահերթ նիստերի ընթացքում՝ ևս 10-ով, որից՝ 14-ը ՀՀ կառավարության նախաձեռնություն (1-ը անհետաձգելի), 11-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորական նախաձեռնություն (2-ը՝ ԱԺ որոշում), իսկ 1-ը՝ պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող այլ հարցեր: Բացի սրանցից արտահերթ նստաշրջանների ընթացքում օրակարգը լրացվեց կառավարության նախաձեռնած 2 հարցով, իսկ հատուկ նիստի ընթացքում՝ ևս 1-ով:

Նստաշրջանի օրակարգում ընդգրկված 65 հարցերից (ներառյալ միջազգային պայմանագրերը) 56-ը օրենքների նախագծեր կամ նախագծերի փաթեթներ էին, որոնցից գարնանային նստաշրջանի ընթացքում գումարված հերթական և

արտահերթ նիստերի ընթացքում քննարկվել և ամբողջությամբ ընդունվել են 31-ը, որոնցից 27-ը՝ ՀՀ կառավարության, 4-ը՝ ՀՀ ԱԺ պատգամավորների: Նշտաշրջանի ընթացքում նաև քննարկվեցին և մերժվեցին թվով 12 օրենքների նախագծեր, որից 4-ը՝ ՀՀ կառավարության նախաձեռնության, 8-ը՝ ԱԺ պատգամավորների: Մերժված օրենքների նախագծերից հատկանշական էր Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախաձեռնությունը, որը ենթադրում էր վարկանիշային ընտրակարգից անցում համամասնականի: Հարկ է նշել, որ սույն օրենքը երկու անգամ քննարկման դրվեց 1 անգամ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, 1 անգամ՝ ԱԺ պատգամավորների, սակայն երկու անգամ էլ մերժվեց:

Բացի օրենքների նախագծերից ընդունվեց նաև Ազգային Ժողովի 2 որոշում՝ առաջինը՝ Արդարադատության իրականացմանը խոչընդոտելու, արդար դատաքննության իրավունքի և հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու փաստերի առնչությամբ երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակը քննության առարկա դարձնելու նպատակով ստեղծված Քննիչ հանձնաժողովների անդամների թիվը սահմանելու մասին որոշումն էր, իսկ երկրորդը՝ ՀՀ գազի և էլէկտրաէներգիայի մատակարարման և բաշխման համակարգերի գործունեությունը, գազի և էլէկտրաէներգիայի գործող սակագների հիմնավորվածությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանելու մասին որոշումը: Ի դեպ հարկ է նշել, որ այս 2 քննիչ հանձնաժողովների կյանքի կոչումը առաջին այսպիսի դեպքն էր 2015 թ. Սահմանադրական փոփոխություններից հետո:

Նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից, արդարադատության ոլորտում, հատկապես հիշարժան էին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարումը, որով ավելի խստացվեցին ընտրակաշառք տալու, վերցնելու և ընտրական պրոցեսներում այլ

օրինազանցություններ կատարելու համար նախատեսված պատիժները՝ վարչական պատասխանատվությունից տեղափոխելով այն քրեական պատասխանատվության ոլորտ: Արդարադատության ոլորտում ավելի էֆեկտիվ աշխատանք ապահովելու համար իրավամբ նշանակալի էր Էրեբունի-Երեվանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելը: Հիշարժան էր նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի ընդունումը: Այս օրենքը ԱԺ պատգամավորների նախաձեռնությունն էր, որի համապատասխանությունը Սահմանադրությանն որոշելու նպատակով ՀՀ նախագահը համաձայն ՀՀ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասի դիմեց Սահմանադրական դատարան:

Նստաշրջանի ընթացքում՝

- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 74 կողմ, 10 դեմ ձայներով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ ընտրվեց Երվանդ Խունդկարյանը :
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 67 կողմ ձայներով ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր ընտրվեց Էդգար Սեդրակյանը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 78 կողմ, 10 դեմ ձայներով, ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ ընտրվեց Կարեն Կարապետյանը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 78 կողմ, 9 դեմ ձայներով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ ընտրվեց Մարտին Գալստյանը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 74 կողմ, 10 դեմ ձայներով, ՀՀ ԱԺ գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Տիգրան ՈՒրիխանյանը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 81 կողմ, 7 դեմ ձայներով, ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր ընտրվեց Արման Դիլանյանը:

- քննարկվեց և 66 կողմ, 4 դեմ, 2 ձեռնպահ ձայներով ընդունվեց «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- քննարկվեց և գաղտնի քվեարկությամբ՝ 30 կողմ, 23 դեմ ձայներով, մերժվեց Վահե Գրիգորյանին ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր ընտրելու հարցը:

Բացի հերթական և արտահերթ նիստերից նստաշրջանի ընթացքում տեղի ունեցավ նաև 1 հատուկ նիստ: Նոյեմբերի 1-ին տեղի ունեցած հատուկ նիստի ժամանակ «Ելք» խմբակցությունը, արդեն երկրորդ անգամ, ՀՀ վարչապետի պաշտոնում առաջադրեց Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը: Ի դեպ հարկ է նշել, որ առաջին անգամ Նիկոլ Փաշինյանը, որպես ՀՀ վարչապետի թեկնածու առաջադրվել էր հոկտեմբերի 23-ին գումարված ԱԺ հերթական նիստերի ընթացքում, սակայն 0 կողմ, 1 դեմ, 11 ձեռնպահ ձայներով թեկնածությունը մերժվել էր: Նոյեմբերի 1-ի հատուկ նիստում Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը 0 կողմ, 0 դեմ, 13 ձեռնպահ ձայներով երկրորդ անգամ նույնպես մերժվեց և ՀՀ Ազգային ժողովը՝ համապատասխան ՀՀ Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի իրավունքի ուժով արձակվեց:

Նստաշրջանի ընթացքում ԱԺ պատգամավորները ՀՀ կառավարությանը դիմել են 37 բանավոր և 3 գրավոր հարցով: Հնչել է 48 պատգամավորական հայտարարություն, որոնցից 15-ը վերաբերում էր գործադիրի գործունեությանը:

Նստաշրջանի ընթացքում ընդունվեց 10 միջազգային պայմանագիր վավերացնելու մասին օրենքի նախագիծ: Այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Միավորված ազգերի կազմակերպության պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջև հիմնական համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Կարևոր էր նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության

կառավարության միջև հանցավորության դեմ պայքարում համագործակցության վերաբերյալ» համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Դե իսկ ֆինանսական տեսանկյունից հիշարժան է Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2018 թվականի նոյեմբերի 9-ին ստորագրված «Հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների ծրագիր. Ենթածրագիր 2» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: